ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիսի 2024 թվականի N 704-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի N 57-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 12-ի «Լիազորված մարմնի՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունում վարչատնտեսական գործընթացի կառավարումն իրավաբանական անձին պատվիրակելու կարգը հաստատելու մասին» N 57-Ն որոշման հավելվածի՝

1) 4-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետից հանել «պայմանագիր.» բառը,

բ. 4-րդ ենթակետում «սանիտարահիգիենիկ վիճակի» բառերը փոխարինել «մաքրության» բառով,

գ. 5-րդ ենթակետում «տեխնիկայի ապահովում» բառերը փոխարինել «ծառայություն» բառով.

2) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Լիազոր մարմնի ենթակայությամբ գործող հաստատությունների վարչատնտեսական մասի համակարգողները (այսուհետ՝ համակարգող) հաստատու-

թյուններում վարչատնտեսական գործառույթները պատվիրակելու մասին հայտերը ներկայացնում են լիազոր մարմնին գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կենտրոնացված գնումների համար սահմանված կարգով և ժամկետներում, որոնց հիման վրա լիազոր մարմինը հայտարարում է համապատասխան գնման ընթացակարգեր։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

16.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ